



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ԾՐԱԳԻՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

ԵՐԵՎԱՆ 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները	4
1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում	4
2. Սակագնային քաղաքականություն	7
3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց պայմանագրային հարաբերությունների կարգավորում	10
4. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ	11
5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում	14
6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն	17
7. Հանձնաժողովի հիմնական գործունեության ընթացիկ ուղղություններ	19
Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ոլորտային ծրագրերը	22
1. Էներգետիկայի բնագավառ	22
2. Ջրային բնագավառ	24
3. Հեռահաղորդակցության բնագավառ	25
Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համագործակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, այլ երկրների կարգավորող մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ	31

Նախաբան

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) Էներգետիկայի, հեռահաղորդակցության, փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների սակագների սահմանման մասով), Երկաթուղային տրանսպորտի (Էներգետիկայի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային համակարգում (գործունեության թույլտվությունների տրամադրման և սակագների սահմանման մասով) կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» ՀՀ օրենքներով և ՀՀ ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- սակագնային քաղաքականության վարչություն
- ֆինանսական վերլուծության վարչություն
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն՝
 - իրավաբանական և դատական սպասարկման բաժին
 - լիցենզավորման բաժին
- զարգացման և մոնիթորինգի վարչություն՝
 - տնտեսագիտական բաժին
 - տեխնիկական բաժին
- հեռահաղորդակցության վարչություն՝
 - կարգավորման քաղաքականության բաժին
 - ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժին
- դիմում-բողոքների քննարկման և նիստերի նախապատրաստման բաժին
- տնտեսական բաժին
- անձնակազմի կառավարման բաժին

- հաշվապահական հաշվառման և սոցիալական ծրագրերի իրականացման բաժին
- ներքին աուդիտի բաժին
- ընդհանուր բաժին

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում

Հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից:

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է պետական կառավարման տարբեր մարմինների հետ՝ հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող օրենսդրությունը կատարելագործելու և հասարակության համար կարգավորման թափանցիկությունն ապահովելու, սպառողների կամ կարգավորվող անձանց նկատմամբ խտրականությունը բացառելու, սպառողների և կարգավորվող անձանց շահերը հավասարակշռելու, ինչպես նաև մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակները սահմանափակելու ու կարգավորման գործիքները կատարելագործելու նպատակով:

2014 թվականի ընթացքում հանձնաժողովը մասնակցել է Մաքսային միությանը և Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությանն առնչվող աշխատանքներին: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի №126-Ս որոշմամբ հանձնաժողովը ճանաչվել է բնական մենաշնորհների կարգավորման ոլորտում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համագործակցող պետական լիազոր մարմին: Ճանապարհային քարտեզով նախատեսված՝ հանձնաժողովի կարգավորման ոլորտներին առնչվող կետերի վերաբերյալ

կազմակերպվել և անցկացվել են բազմաթիվ քննարկումներ: Հանձնաժողովը ներկայացրել է Հայաստանի Հանրապետությունում առկա բնական մենաշնորհների ոլորտների նկարագիրը և դրանք Մաքսային միության և Եվրասիական տնտեսական միության բնական մենաշնորհների ոլորտների ներդաշնակեցման հետ կապված խնդիրները, իրականացվել է Մաքսային միության և Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համեմատական վերլուծություն, ինչպես նաև դրանց համադրման աշխատանքներ, կազմվել և ներկայացվել են համապատասխան տեղեկանքներ: Հանձնաժողովն իրականացրել է «Եվրասիական տնտեսական միության մասին» և «Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին» պայմանագրերի նախագծերի ուսումնասիրություն, դրանց վերաբերյալ ներկայացրել է համապատասխան առաջարկություններ: Մշակվել է օրենսդրության մոտարկման աշխատանքների իրականացման համար գործողությունների ժամանակացույց, որի իրականացման ուղղությամբ աշխատանքները կշարունակվեն նաև 2015 թվականին: Այս համատեքստում հարկ է նաև նշել, որ հանձնաժողովի ներկայացուցիչը 2014 թվականի սեպտեմբեր ամսվա ավարտին Ղազախստանի Հանրապետության Ալմաթի քաղաքում հանդես կգա համապատասխան զեկույցով՝ ներկայացնելով այս ոլորտում Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությունը, Եվրասիական տնտեսական միության անդամակցելու ուղղությամբ կատարված քայլերը և հետագա գործողությունների ծրագիրը:

Բացի այդ, լրամշակվել է էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, որով հստակեցվել են այդ ոլորտում տնտեսվարող սուբյեկտների կողմից հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերը, նոր լուծումներ են առաջադրվել կարգի կիրառման ընթացքում ծագած խնդիրների կարգավորման ուղղությամբ, մասնավորապես, հստակեցվել են արտադրության լիցենզիա ունեցող անձանց կողմից կայանի կառուցումը (վերակառուցումը) ավարտելուց հետո հանձնաժողով ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը և ժամկետները: Լիցենզավորման գործընթացի միասնական կարգավորման նպատակով կարգում ներառվել են գործունեության լիցենզիայում փոփոխությունների կատարման, լիցենզիայի կասեցման, դադարեցման և վերաձևակերպման վերաբերյալ նոր կարգավորումներ:

Մինևույն ժամանակ, «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-98-Ն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ հանձնաժողովը 2015 թվականին կրնդունի էլեկտրաէներգետիկական շուկայի մասնակիցների հարաբերությունները կարգավորող նոր կարգեր կամ փոփոխություններ կիրականացվեն արդեն իսկ գործողներում, մասնավորապես՝

- կմշակվի և կսահմանվի էլեկտրաէներգետիկական համակարգում վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակների ժամանակ էլեկտրական էներգիայի (հզորության) ներկրման և արտահանման կարգը,
- կմշակվի և կսահմանվի էլեկտրաէներգետիկական համակարգում Հայաստանի Հանրապետության տարածքով էլեկտրական էներգիայի (հզորության) տարանցիկ փոխադրման և հավասարակշռման կարգը,
- համապատասխան փոփոխություններ կկատարվեն Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի արտահանման կարգում,
- համապատասխան փոփոխություններ կկատարվեն Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայում:

Հարկ է նաև նշել, որ ջրային համակարգում հանձնաժողովին ՀՀ օրենսդրությամբ վերապահված կարգավորման իրավասություններն էականորեն տարբերվում են էներգետիկայի բնագավառում վերապահված իրավասություններից: Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի՝ հանձնաժողովն իրականացնում է սակագնային քաղաքականություն և ոչ մրցակցային ջրամատակարարներին տրամադրում ջրային համակարգի օգտագործման թույլտվություններ: Իսկ էներգետիկայի բնագավառում, որպես կարգավորմանը բնորոշ գործառնություններ, հանձնաժողովին են վերապահված նաև մատակարարման և օգտագործման կանոնների, մատակարարման պայմանագրերի օրինակելի ձևերի սահմանումը, ինչպես նաև դրանք խախտելու դեպքերում ընկերություններին պատասխանատվության ենթարկելու գործիքները և իրավասությունը, ինչն առավել ամբողջական և արդյունավետ է դարձնում կարգավորման համակարգը:

Ջրային համակարգում կարգավորման գործիքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հանձնաժողովը համապատասխան առաջարկություններ է ներկայացրել ՀՀ կառավարություն, որոնք ներկայումս գտնվում են քննարկման փուլում:

Հանձնաժողովի դիտարկմամբ, անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ ջրային օրենսգրքում և այս համակարգում ընդլայնել հանձնաժողովի իրավասությունները՝ նրան վերապահելով խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների, ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերի սահմանման իրավասությունը, ինչպես նաև սահմանել պատասխանատվություն խմելու ջուր մատակարարող ընկերությունների նկատմամբ՝ ամրագրելով դրանց դեպքերը, չափերը և գործիքները՝ միաժամանակ հանձնաժողովին օժտելով կարգավորմանն առնչվող իրավական ակտերի խախտման դեպքում մատակարարների նկատմամբ տույժեր կիրառելու իրավասությամբ:

Նշված առաջարկությունը ՀՀ կառավարության հավանությանն արժանանալու դեպքում հանձնաժողովը համապատասխան պետական մարմինների հետ համատեղ ձեռնամուխ կլինի ՀՀ ջրային օրենսգրքի լրամշակման աշխատանքներին: Այս փոփոխությունների իրականացման դեպքում հանձնաժողովը կմշակի և կսահմանի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման նոր կանոններ, ինչպես նաև ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի նոր օրինակելի ձևեր, որոնք որակական նոր հարթություն կտեղափոխեն մատակարար-սպառող հարաբերությունները ջրային համակարգում:

2. Սակագնային քաղաքականություն

Սակագնային կարգավորումը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

Հիմք ընդունելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային մարժայի և մյուս ընկերությունների սակագների հաշվարկման մեթոդիկաները, հաշվի առնելով էլեկտրական էներգիայի 2014-2015 թվականների սպառման և համապատասխան էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության հաշվեկշռի վերաբերյալ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կանխատեսումները,

լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի ու պարտավորությունների, էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված ներդրումների վերլուծության արդյունքները և մի շարք այլ գործոններ, հանձնաժողովը 2014 թվականի օգոստոսի 1-ից վերանայել է էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագները:

Արդյունքում՝ 2014 թվականի օգոստոսի 1-ից գործողության մեջ են մտել նոր սակագներ ինչպես արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի և էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների, այնպես և վերջնական սպառողների համար:

Մինչև 2014 թվականի դեկտեմբերի 1-ը, հաշվի առնելով դրամի փոխարժեքի տատանումները և սղաճի փոփոխությունները, սահմանված կարգով կճշգրտվեն փոքր հիդրոէլեկտրակայաններից և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: Այս գործընթացը կրում է պարբերական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի:

Հաշվի առնելով վերականգնվող էներգետիկայի բնագավառում ներդրողների հետաքրքրվածության աճը արևային էլեկտրակայանների նկատմամբ, ինչպես նաև Կլիմայի ներդրումային հիմնադրամների «Ցածր եկամուտ ունեցող երկրներում վերականգնվող էներգիայի խթանման ծրագրի» շրջանակում արևային էլեկտրակայանների կառուցման մտադրությունը, հանձնաժողովը նախատեսում է արևային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի համար սահմանել հաստատուն սակագին, որը յուրաքանչյուր տարի կճշգրտվի՝ հայկական դրամի արտարժույթային փոխարժեքի և սղաճի փոփոխություններով պայմանավորված:

Յուրաքանչյուր տարի՝ մինչև տարեվերջ, ուսումնասիրվում և հաստատվում են էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

2014 թվականի փետրվար ամսին վարձակալության 9-րդ պայմանագրային տարվա համար սակագների ճշգրտման առաջարկով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով էր դիմել «Երևան Ջուր» ՓԲԸ-ն՝ բազիսային սակագներում հաշվի առնելու մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող

Էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունները: Ելնելով սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, ինչպես նաև 2013թ. մանրածախ ջրամատակարարման ծավալների և այլ եկամուտների ուսումնասիրության ու վերլուծության արդյունքներից, ճշգրտված մանրածախ սակագինը հաշվարկվել է 179,596 դրամ/լիտր (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը): Սակայն, հաշվի առնելով «Երևան Ջուր» ՓԲԸ-ին տրամադրված ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմանների N2 հավելվածը և նպատակ ունենալով բաժանորդների նկատմամբ իրականացնել կայուն սակագնային քաղաքականություն, ընկերության համաձայնությամբ վարձակալության 9-րդ պայմանագրային տարվա մանրածախ ծառայությունների մատուցման սակագների հաշվարկված մեծության և գործող սակագների տարբերությունը ավելացվել է պայանագրային 10-րդ տարվա մանրածախ ծառայությունների բազիսային սակագնին՝ անփոփոխ թողնելով մանրածախ գործող սակագները: Միաժամանակ, սահմանվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մեծածախ ծառայությունների, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման նոր սակագները:

Ելնելով մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և «Երևան Ջուր» ՓԲԸ-ին մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների 2014 թվականի փաստացի գնահատականներից, 2015 թվականին նույնպես կճշգրտվեն ընկերության կողմից սպառողներին խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ծառայությունների մատուցման բազիսային սակագները:

«ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման սակագների հաշվարկման, այդ ծառայությունների միջև ծախսերի բաշխման սկզբունքները հստակեցնելու նպատակով, ինչպես նաև ընկերության անհրաժեշտ հասույթի վերլուծության և էլեկտրոնային հաղորդակցության շուկայում տեղի ունեցող զարգացումների արդյունքում հաստատվել են «ԱրմենՏել» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման սակագների հաշվարկման և ծախսերի բաշխման մեթոդիկաները, իսկ 2014 թվականի սեպտեմբերի 1-ից նվազեցվել են ՀՀ տարածքում միջքաղաքային, դեպի ԼՂՀ ամրակցված ցանց զանգերի սակագները՝ հավասարեցնելով տեղական զանգերի սակագնին: 2015 թվականի հուլիսի

1-ից սկսած բաժանորդավճարի դիմաց տրամադրվող անվճար բոլորների չափաքանակները կկիրառվեն նաև միջադատարարական գանգերի նկատմամբ:

Հանձնաժողովը պարբերաբար իրականացնում է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի անհրաժեշտ հասույթի վերլուծություն, ուսումնասիրում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկաներում տեղի ունեցող զարգացումները և անհրաժեշտության դեպքում վերանայում է «ԱրմենՏել» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառվող սակագնային քաղաքականությունը և սակագնային կարգավորման ենթակա ծառայությունների ցանկը:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով՝ նախատեսվում է ճշգրտել և հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2015 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան մեծությունները: Այս գործընթացը կրում է պարբերական բնույթ և իրականացվում է յուրաքանչյուր տարի:

3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց պայմանագրային հարաբերությունների կարգավորում

Հանձնաժողովի կողմից իրականացվող լիցենզավորման գործառույթը հնարավորություն է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կերպով կատարող ընկերությունների նկատմամբ:

2014 թվականի հունվարի 1-ից սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում էներգետիկայի բնագավառում տրամադրվել է էլեկտրական էներգիայի (հզորության) արտահանման՝ մեկ, հողմային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության՝ մեկ և փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության 26 լիցենզիա, երկարաձգվել է էլեկտրական էներգիայի

(հզորության) արտադրության լիցենզիաներով ամրագրված կառուցման փուլում գտնվող 8 կայանի կառուցման ժամանակահատվածը: Միաժամանակ, վերոնշյալ ժամանակահատվածում դադարեցվել է փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության՝ մեկ և փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման 4 լիցենզիա: Ջրային համակարգում երկարաձգվել է ջրային համակարգի օգտագործման 2 թույլտվության գործողության ժամկետ, իսկ ջրային համակարգի օգտագործման 1 թույլտվության գործողությունը դադարեցվել է:

Կարգավորվող բնագավառներում գործունեության, լիցենզիաների, թույլտվությունների տրամադրման և էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված, ինչպես նաև էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի իրավական փորձաքննության գործընթացը կշարունակվի նաև 2015 թվականին:

4. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ

Կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշների պահպանման գործընթացը մշտապես գտնվում է հանձնաժողովի ուշադրության կենտրոնում՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության, այնպես և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով: Այս գործիքակազմի կիրառմամբ հանձնաժողովը մշտապես բարձրացնում է իր կողմից իրականացվող մոնիթորինգի աշխատանքների արդյունավետությունը:

Հանձնաժողովն էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից եռամսյակային պարբերականությամբ տեղեկատվություն է ստանում սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ: Մասնավորապես՝ մշտական մոնիթորինգի են ենթարկվում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների՝ սպառողների մատակարարման ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա և բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը:

Սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշներից շեղումների դեպքում մատակարար ընկերությունների հետ պարբերաբար իրականացվում են առկա խնդիրների կարգավորմանն ուղղված քննարկումներ, մշակվում են միջոցառումներ՝ նման խախտումները հետագայում բացառելու նպատակով: Հարկ է նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային կտրվածքով հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքում:

2013 թվականի հունվարի 1-ից գործում է սպառողների սպասարկման որակի ցուցանիշների խախտման համար էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման ու օգտագործման կանոններով սահմանված՝ ավտոմատ տույժերի կիրառման համակարգը: Վերջինս սահմանում է, որ մատակարարը էներգամատակարարման ընդհատումների, սպառողների դիմումներին և բողոքներին արձագանքելու համար սահմանված ժամկետների, ինչպես նաև սպառողների իրավունքներին առնչվող՝ կանոններով ամրագրված մի շարք այլ ընթացակարգերի խախտման յուրաքանչյուր դեպքի համար վերջինիս վճարում է տույժ: Տույժի չափը համարժեք է սպառողի ծախսած՝ համապատասխանաբար էլեկտրական էներգիայի կամ բնական գազի միջին ամսական արժեքի 20%-ին (բայց ոչ ավելի, քան 2000 դրամը): Հաշվարկված տույժը նվազեցվում է սպառողի նախորդ ամսում ծախսած էլեկտրական էներգիայի կամ բնական գազի արժեքից՝ այդ մասին հատուկ նշում կատարելով վճարման փաստաթղթում: Տույժերի վճարման գործընթացը մատակարարի կողմից իրականացվում է ավտոմատ եղանակով՝ առանց սպառողի կողմից որևէ դիմում կամ փաստաթուղթ ներկայացնելու պահանջի: Նշված համակարգի ներդրումից հետո էներգամատակարարման ընդհատումների վերականգնման համար սահմանված ժամկետների խախտման համար կարգավորվող ընկերությունների կողմից արդեն իսկ 33571 սպառողի վճարվել է 31.7 մլն դրամ տույժ, որից 7.9 մլն դրամը 2014 թվականի

առաջին կիսամյակի ընթացքում:

Միննույն ժամանակ, հանձնաժողովն իր գործառնությունների տիրույթում հետևողական քայլեր է ձեռնարկում ջրամատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պայմանների մոնիթորինգի ուղղությամբ: 2014 թվականին պարբերաբար ուսումնասիրվել են «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից հրապարակված գրաֆիկների և փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշները: Բացի այդ, հանձնաժողովը, տեղեկատվության հավաստիության ուսումնասիրության նպատակով, «Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության սպասարկման տարածքում գտնվող 30 համայնքներում հարցում է կատարել փաստացի ջրամատակարարման տևողության փաստացի ցուցանիշների վերաբերյալ: Միննույն ժամանակ, շարունակվում են աշխատանքները Երևան քաղաքի բաժանորդների ջրամատակարարման գրաֆիկների փաստացի ցուցանիշների ուսումնասիրության նպատակով: Աշխատանքները կավարտվեն մինչև ընթացիկ տարվա ավարտը, և արդյունքների վերաբերյալ 2015 թվականի սկզբին կհրապարակվի համապատասխան վերլուծական տեղեկանք:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացին: 2014 թվականին իրականացրած ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ ընկերությունը որոշ դեպքերում չի ապահովել նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման գործընթացը: Նշված խախտումների համար ընկերությունը 2014 թվականի ընթացքում արդեն իսկ ենթարկվել է տուգանքի՝ 15 մլն ՀՀ դրամի չափով, իսկ առկա խնդիրների կարգավորման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ:

2015 թվականի ընթացքում հանձնաժողովը կշարունակի սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվության մոնիթորինգի աշխատանքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վարչարարությունը՝ իրենց պարտականությունները ոչ պատշաճ կատարող ընկերությունների նկատմամբ: Մասնավորապես՝ 2015 թվականին տեղեկատվության հավաստիության

ուսումնասիրություն կիրականացնի «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերություններում:

5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում

Հանձնաժողովի գործառույթներից իր կարևորությամբ առանձնանում է էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, այդ թվում՝ ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը: Նշված աշխատանքների իրականացումը կարևոր է սակագներում ներառման ենթակա ներդրումների օգտակար և օգտագործվող ծավալի գնահատման, այդ համատեքստում անարդյունավետ և ոչ հիմնավոր ներդրումների ծավալի բացահայտման և վերհանման առումով՝ սպառողներին առաքվող էլեկտրական էներգիայի և բնական գազի սակագներում դրանք չներառելու սկզբունքից ելնելով: Այդ նպատակով է հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև ամփոփում ընկերությունների նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

Ներկայումս էներգետիկայի բնագավառում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումային ծրագրեր իրականացնում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունները: «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության ներդրումային ծրագիրը միտված է Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադի արդիականացմանը, հիդրոկառույցների վերականգնմանը և հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, իսկ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերը՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների սպառման համակարգերի միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի կատարելագործմանը, հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների

ներդրմանը, ինչպես նաև ընկերությունների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ ներդրումների իրականացմանը: Հանձնաժողովն առանձնակի ուշադրություն է դարձնում կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ ներդրումներն առաջնահերթ առավել վատթար վիճակում գտնվող բնակավայրերի սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանն ուղղելու նպատակով:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ 2015 թվականին հանձնաժողովը կքննարկի և համաձայնություն կտա «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա» և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունների ներդրումային ծրագրերին, ինչպես նաև կամփոփի ընկերությունների 2014 թվականի ներդրումային գործունեության արդյունքները: Քայլեր կձեռնարկվեն նաև բնագավառի կարգավորվող ընկերությունների հետագա զարգացումը խթանելու և նոր ներդրումներ ներգրավելու ուղղությամբ:

Փոքր հիդրոէներգետիկայի բնագավառում ներդրումների խրախուսման ուղղությամբ հանձնաժողովի կողմից տարվող հստակ քաղաքականության արդյունքում յուրաքանչյուր տարի արձանագրվում են նոր դրական ցուցանիշներ, որոնք վկայում են բնագավառի զարգացման կայուն առաջընթացի մասին:

2014 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում է 163 փոքր հիդրոէլեկտրակայան, ևս 53-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 280 ՄՎտ, և դրանք միջին տարեկան հաշվով կարող են արտադրել շուրջ 835 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է 127 ՄՎտ, և ակնկալվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 430 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 216 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 406 ՄՎտ հզորություն և միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 1,3 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա, որը Հրազդանի 5-րդ էներգաբլոկում արտադրելու դեպքում կծախսվեր շուրջ 320 մլն մ³ բնական գազ:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար, հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2014 թվականին՝ մինչև սեպտեմբերի

1-ը, լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու և լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու համար կայացվել է ընկերություններին ֆինանսական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 32 որոշում:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև իր կարգավորման դաշտում գործող հանրային կազմակերպությունների՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Գազպրոմ Արմենիա», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ԱրմենՏել» ՓԲԸ-ների, «Տրանսգազ» ՍՊԸ-ի և «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ի կողմից իրականացվող գնումների արդյունավետությանն ու թափանցիկությանը: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը ներկայումս հրապարակվում է ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես և ընկերությունների պաշտոնական կայքերում:

Գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման և թափանցիկության ապահովման նպատակով 2014 թվականի ընթացքում հանձնաժողովը, համագործակցելով ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Ցածր արտանետումների ռազմավարություն և մաքուր էներգիայի զարգացում Եվրոպայում և Եվրասիայում» ծրագրի Հայաստանյան գրասենյակի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, սահմանել է իր հաստատած ցանկում ներառված հանրային կազմակերպությունների գնումների կարգերին ներկայացվող նոր միասնական լրացուցիչ պահանջներ, ինչպես նաև այդ կազմակերպությունների գնումների գործընթացի մոնիթորինգի կարգը, որում ամրագրված են մոնիթորինգի մեխանիզմները և գործիքները, ինչպես նաև իրականացման և արդյունքների հրապարակման պարբերականությունն ու ձևաչափը: 2015 թվականին հանձնաժողովը, համագործակցելով բոլոր շահագրգիռ կողմերի և միջազգային կազմակերպությունների հետ, կշարունակի աշխատանքները հանրային ծառայությունների ոլորտի կարգավորվող անձանց կողմից փաստացի կատարված գնումների արդյունավետությանն ու թափանցիկության բարձրացման ուղղությամբ, կիրառելով նաև արդեն իսկ ներդրված հաշվետվությունների համակարգը:

6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար: Այդ առումով կարևորվում է կարգավորվող ոլորտների ընկերություններում հաշվապահական հաշվառման հաշիվների և ենթահաշիվների նոր համակարգի ներդրումը, որը հնարավորություն է ընձեռում հստակորեն տարանջատել հիմնական (կարգավորվող) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն իսկ ներդրված է էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նշված ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Հիշյալ աշխատանքների իրականացման արդյունքում կրճատվել են էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգի ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները և ներկայացման պարբերականությունները:

Ֆինանսական վերլուծության կազմակերպման և կատարելագործման, նրա նպատակաուղղվածության և արդյունավետության բարձրացման աշխատանքները շարունակական զարգացում կունենան նաև 2015 թվականին:

Ելնելով այն հանգամանքից, որ հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում ընդգրկված են տարբեր բնույթի ֆունկցիոնալ գործունեություն իրականացնող ընկերություններ, հանձնաժողովը սկսել է կարգավորվող ընկերություններում հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլանների ներդրման գործընթաց: Այս ձեռնարկումը հանձնաժողովին հնարավորություն է տալիս կարգավորվող յուրաքանչյուր ընկերությունից ստանալ առավել մանրամասն և հասցեական տեղեկատվություն, արագ և դինամիկ կերպով արձագանքել կարգավորվող ոլորտներում ընկերությունների կազմակերպաիրավական կառուցվածքների, նրանց գործառնությունների

շրջանակի, ինչպես նաև տնտեսական դաշտում օրենսդրական փոփոխություններին և համարժեք փոփոխություններ կատարել հաշվապահական հաշվառման հաշվային պլաններում:

Հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ արդեն ներդրվել են գազամատակարարման համակարգի կարգավորվող ընկերություններում, ինչպես նաև, դրանց համապատասխան լրամշակվել են ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ձևերը:

Ներկայումս ընթացքի մեջ է էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավորվող ընկերությունների համար հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլանների մշակման գործընթացը: Հաշվի առնելով էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավորվող ընկերությունների քանակը և նախատեսվող աշխատանքի ծավալները, նշված աշխատանքներն իրականացվում են փուլային եղանակով:

Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության արդյունքներն էական դեր են կատարում ինչպես հանձնաժողովի կողմից հանրային ծառայությունների ոլորտում իրականացվող սակագնային քաղաքականության, այնպես էլ ընկերությունների կողմից ներդրումային ծրագրերի իրականացման գործընթացներում:

Մասնավորապես, ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները և կատարված ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունը համադրելու նպատակով ներկայումս լրամշակման փուլում են գտնվում էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հիմնական միջոցների մասին տեղեկատվական ձևերը, որը հնարավորություն կտա ներկայացված ներդրումային ծրագրերի շրջանակում ընկերությունների ձեռք բերած հիմնական միջոցները նույնականացնել ըստ գույքային համարների և հաշվապահական հաշվառման հաշիվների (ենթահաշիվների):

2015 թվականի ընթացքում կարգավորվող ընկերությունները կներկայացնեն հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կկատարվի նրանց ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը

կշարունակի իր վեբ կայքում հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

7. Հանձնաժողովի հիմնական գործունեության ընթացիկ ուղղություններ

Հանձնաժողովի՝ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարմանն են ուղղված նրա գործունեության ընթացիկ ուղղությունները:

Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում որոշումներն ընդունում է նիստերի միջոցով, որոնք դոնբաց են և գործնականում անցկացվում են ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Հանձնաժողովը նախապես հայտարարում է նիստերի անցկացման տեղի և ժամի մասին, հնարավորություն ընձեռում շահագրգիռ անձանց և հանրության ներկայացուցիչներին մասնակցել նիստերին, ստանալ օրակարգն ու քննարկվող նյութերը, ներկայացնել տեղեկություններ և հանդես գալ ելույթներով: 2014 թվականի հունվարից 1-ից սեպտեմբերի 1-ն ընկած ժամակահատվածում հրավիրվել է հանձնաժողովի 40 նիստ և ընդունվել 346 որոշում: Այս գործընթացը, բնականաբար, ունի շարունակական բնույթ և կիրականացվի նաև 2015 թվականին:

Մինևույն ժամանակ, հանձնաժողովը տարբեր կազմակերպություններից և անհատներից ստանում է տարաբնույթ գրություններ՝ պարզաբանումներ ստանալու կամ կարգավորվող ընկերությունների հետ առաջացած վեճերի լուծման վերաբերյալ: 2014 թվականի հունվարից 1-ից սեպտեմբերի 1-ն ընկած ժամակահատվածում արդեն իսկ ստացվել է 3221 գրություն, որոնցում բարձրացված հարցերին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրվել են համապատասխան լուծումներ և պարզաբանումներ: Ընդհանուր առմամբ, այդ նույն ժամանակահատվածում տարբեր կազմակերպությունների և անհատների է ուղարկվել հանձնաժողովի 2444 գրություն: 2015 թվականին այս ուղղությամբ տարվող աշխատանքները, բնականաբար, կունենան շարունակական բնույթ:

Հանձնաժողովում գործում է նաև «Հրատապ հեռախոս», որի միջոցով կազմակերպությունները և անհատները խորհրդատվություն են ստանում մատակարար-սպառող հարաբերություններում իրենց իրավուքների և պարտականությունների, դրանց խախտման դեպքում անհրաժեշտ քայլերի և գործողությունների վերաբերյալ:

Հանձնաժողովը նաև «Հրատապ հեռախոսի» և իր էլեկտրոնային փոստի միջոցով ընդունում և պաշտոնական ընթացք է տալիս սպառողների բարձրացրած հարցերին:

Միննույն ժամանակ, հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում է գանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքը, որը միտված է հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը պատշաճ լուսաբանելու և հանրությանն առավել ընկալելի ներկայացնելու խնդրին: Շարունակելով զարգացնել թափանցիկ և հրապարակային աշխատանքը, 2015 թվականին հանձնաժողովը կփորձի առավելագույնս նպաստել հանրության բոլոր շերտերի իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Այդ նպատակով գալիք տարվա համար ծրագրվում է առավել ակտիվ և նախաձեռնող մարտավարություն: Հանձնաժողովի դիտակետում կլինի հանրության հետ հետադարձ կապի ապահովման խնդիրը, սահմանված կարգով և ժամկետներում պատասխաններ կտրվեն բարձրացված գրավոր և բանավոր հարցերին, լրատվամիջոցների համար պարբերաբար կթողարկվեն համառոտ ծանուցումներ, կտրվեն մամլո հաղորդագրություններ, հանձնաժողովի նիստերի մասին ամփոփիչ տեղեկանքներ: Հանձնաժողովի գործունեության և հանրային ընկալման առումով հետաքրքրություն ներկայացնող որոշումների մասին պաշտոնական տեղեկատվությունները կհրապարակվեն մամուլում և էլեկտրոնային լրատվամիջոցներով: Ինչպես նախորդ տարիներին, 2015 թվականին նույնպես տեղեկատվության տարածումն ընդգրկելու է հանրապետության ողջ տարածքը: Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես կգան ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով: Կշարունակվի մամուլի հրապարակումների ամենօրյա վերլուծությունը. հանձնաժողովի և կարգավորվող ոլորտների գործունեության մասին հրապարակումները կներկայացվեն աշխատակազմին՝ դրանով իսկ դիտարկելի դարձնելով ծառայություններ մատուցող ընկերությունների և հանրության կարծիքն ու գնահատականը:

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ, որոնց ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են հանրային շահի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկմանը, ներկայացնում իրենց դիրքորոշումը, դիտողություններն ու առաջարկությունները: Նրանք մասնակցում են նաև հանձնաժողովի նիստերին և

հարցերի ու ելույթների միջոցով ներկայացնում սեփական կամ հանրության տեսակետը քննարկվող հարցերի առնչությամբ: Ավանդույթ դարձած երկխոսության այս արդյունավետ ձևաչափը շարունակություն կունենա նաև 2015 թվականին:

Հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերություններն ապահովում են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև փոքր հիդրոէլեկտրակայանները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու կամ լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: Ակնկալվում է, որ 2014 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե կփոխանցվի շուրջ 6,5 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 5,5 մլրդ դրամը, կկազմեն ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը: Ըստ կանխատեսումների՝ 2015 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե կփոխանցվի շուրջ 6,4 մլրդ դրամ, որից ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը կկազմեն շուրջ 5,8 մլրդ դրամ:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ոլորտային ծրագրերը

1. Էներգետիկայի բնագավառ

Էներգետիկայի բնագավառում մատակարար-սպառող հարաբերություններում առաջացած խնդիրների կարգավորման և սպառողների սպասարկման որակի բարելավման նպատակով 2014 թվականին հանձնաժողովը դիմել է Եվրոպական Միության հովանու ներքո գործող Ինոգեյթ կազմակերպությանը՝ Հայաստանի Հանրապետությունում և Եվրոպական Միության անդամ երկրներում գործող սպառողների սպասարկման որակի ցուցանիշների համադրության նպատակով: Աշխատանքներն արդեն իսկ ավարտված են և, փորձագետների ներկայացրած նախնական զեկույցի համաձայն, Հայաստանում կիրառվող սպասարկման որակի ցուցանիշները հիմնականում համընկնում են Եվրոպական Միության անդամ երկրներում կիրառվող ցուցանիշների հետ, իսկ դրանց որոշ մասն ավելի խիստ է: Ձեկույցի վերջնական տարբերակն ստանալուց հետո այն կհրապարակվի և կներակայացվի բոլոր շահագրգիռ կողմերին:

Մինևույն ժամանակ, մի շարք որոշումներ են մշակվել էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններում փոփոխություններ կատարելու և մատակարար-սպառող հարաբերություններում վիճելի հարցերի առնչությամբ նոր կարգավորումներ կիրառելու նպատակով:

Բնակիչ-բաժանորդներին մատակարարված բնական գազի ծախսի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման այլընտրանքային եղանակների ներդրման նպատակով լրամշակվել են բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները: Արդյունքում 2015 թվականի հունվարի 1-ից բնակիչ-բաժանորդներն իրենց նախընտրած եղանակով (փոստով՝ գրավոր կամ էլեկտրոնային փոստով) հնարավորություն կունենան ծանոթանալ նախորդ հաշվարկային ամսում մատակարարված գազի քանակի և արժեքի հաշվարկման ընթացքում օգտագործված բոլոր ցուցանիշների մասին:

Լրամշակման փուլում են գտնվում նաև բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների մի շարք այլ դրույթներ: Նախատեսվում է հստակեցնել վճարման փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում մատակարարի և սպառողի կողմից իրականացվող գործողությունները, ինչպես նաև կատարելագործել առևտրային հաշվառքի սարքի

խախտման դեպքում սպառված բնական գազի վերահաշվարկման՝ կիրառվող մոտեցումները: Քննարկման փուլում է նաև բնական գազի մատակարարման (բնակիչ-բաժանորդ) պայմանագրի օրինակելի նոր ձևը, որով նախատեսվում է կատարելագործել մատակարար-բնակիչ իրավահարաբերությունները՝ կողմերի միջև վեճերը նվազագույնի հասցնելու նպատակով: Աշխատանքները նախատեսվում է ամբողջությամբ ավարտել և համապատասխան որոշումները կիրարկել 2015 թվականի առաջին եռամսյակի ավարտին:

2015 թվականի ընթացքում կշարունակվեն աշխատանքները նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը բնական գազի բաշխման ցանցին միացման կանոնների լրամշակման ուղղությամբ: Դիտարկման փուլում են գտնվում բնական գազի բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ քայլերի, գործընթացների համար սահմանված ժամկետների կրճատման, ինչպես նաև միացման վճարների սահմանման հարցերը:

Փոփոխությունների մեծ փաթեթ է նախապատրաստվում նաև էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում, որոնց արդյունքում մասնավորապես կկատարելագործվեն՝

- նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ընթացակարգը,
- սպառողների ծախսած էլեկտրաէներգիայի քանակի վերահսկողության մեխանիզմները, այդ թվում վերստուգիչ հաշվառքի սարքերի տեղակայման գործընթացի հստակեցման, առևտրային հաշվառքի սարքերի խափանման դեպքում դրանց կիրառության մեխանիզմների ներդրման և էլեկտրոնային հաշվառման սարքերի հնարավորությունների լիարժեք օգտագործմամբ,
- վճարման փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում կողմերի գործողությունները,
- առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում սպառված էլեկտրաէներգիայի վերահաշվարկման կարգը և մեթոդաբանությունը: Ընդ որում, վեճերի դեպքում կերաշխավորվի սպառողների էլեկտրամատակարարման անընդհատությունը,
- առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման կարգը և մեխանիզմները, այդ թվում կկատարելագործվեն սպառողի՝ առևտրային հաշվառքի սարքի ճշտության ստուգումը այլ կազմակերպություններում իրականացնելու մեխանիզմները:

Սպառողները հնարավորության կստանան իրենց նախընտրած եղանակով (փոստով՝ գրավոր կամ էլեկտրոնային փոստով) ծանոթանալ նախորդ հաշվարկային ամսում մատակարարված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի հաշվարկման ընթացքում օգտագործված բոլոր ցուցանիշներին:

Վերը նշված փոփոխություններին առնչվող որոշումները ևս նախատեսվում է ընդունել մինչև 2015 թվականի առաջին եռամսյակի ավարտը՝ փուլային եղանակով:

Մինևույն ժամանակ նոր սպառողների սպառման համակարգերի միացման գործընթացի հետագա բարելավման նպատակով աշխատանքներ են տարվում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ՝ նոր սպառողների սպառման համակարգերի միացման և մատակարարման պայմանագրերի կնքման էլեկտրոնային նոր միասնական համակարգի ներդրման նպատակով: Այս համատեքստում հարկ է նշել, որ 2013 թվականի հունվարի 1-ից արդեն գործում է նոր սպառողների սպառման համակարգերի միացման դիմումների ներկայացման էլեկտրոնային համակարգը: Նախատեսվում է, որ նոր միասնական համակարգը կսկսի գործել 2015 թվականից:

2015 թվականի ընթացքում նախատեսվում է շարունակել էլեկտրական էներգիայի և բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների լրամշակման աշխատանքները՝ մատակարար-սպառող հարաբերություններում էլեկտրոնային տարբեր գործիքների ներդրման, այդ թվում կիրառվող վճարային համակարգերի կատարելագործման նպատակով:

2. Ջրային բնագավառ

Շարունակական բնույթ են կրում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Յուրաքանչյուր տարի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ները հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում սպառողների ջրամատակարարման տևողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեսկզբի դրությամբ և դրանց ծրագրային մեծությունները՝ հաջորդ տարեսկզբի համար: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առաջնահերթ բարելավել առավել վատթար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարման տևողության ցուցանիշները: 2015 թվականին հանձնաժողովը կվերանայի նշված հինգ

ընկերությունների ջրամատակարարման տնտղության փաստացի մեծությունները, ինչպես նաև կսահմանի այդ ցուցանիշների 2016 թվականի ծրագրային մեծությունները:

Միննույն ժամանակ, 2014 թվականի ընթացքում հստակեցվել են ընկերությունների սպասարկման տարածքները և համապատասխան փոփոխություններ են կատարվել «Երևան Ջուր», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» ՓԲԸ-ների ջրային համակարգի օգտագործման թույլտվության պայմաններում: Լրամշակվել են նաև ընկերությունների սպասարկման որակի նվազագույն պահանջները, մասնավորապես, հստակեցվել են մատակարարվող խմելու ջրի ճնշմանը վերաբերող դրույթները: 2015 թվականին հանձնաժողովը կշարունակի աշխատանքները ընկերությունների սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարելագործման ուղղությամբ:

Բացի վերը նշվածից, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների կայունության զարգացման աջակցություն» ծրագրի շրջանակում, նպատակ ունենալով բարձրացնել խմելու ջրի բնագավառում սպառողների իրազեկվածությունը, հանձնաժողովի ինտերնետային կայքում հրապարակվել են ջրամատակարար ընկերությունների պարտավորությունների, կենցաղային կարիքների համար խմելու ջրի մատակարարմանը ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների, սպառողների հարցադրումների, դիմում-բողոքների և դրանց արձագանքման գործընթացի, ջրի սակագների մեծությունների և սակագները ձևավորող բաղադրիչների վերաբերյալ տեղեկատվություն: Նշված տեղեկատվությունը յուրաքանչյուր տարի պարբերաբար կթարմացվի՝ խմելու ջրի բնագավառում տեղի ունեցած փոփոխությունները հանրությանը ամփոփ տեսքով ներկայացնելու նպատակով:

3. Հեռահաղորդակցության բնագավառ

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները՝ 2014 թվականին աշխատանքներ են իրականացվել բնագավառի դինամիկ և համաչափ զարգացման, մրցակցության խթանման, գործարար և ներդրումային միջավայրի բարելավման, բաժանորդների իրավունքների և շահերի պաշտպանության, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, մասնավորապես.

- Էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման և ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բոլոր բնակավայրերը և միջպետական ավտոճանապարհների մոտ 97%-ն ապահովված են առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի ծածկույթով: Ընդ որում, ՀՀ բնակավայրերի 68,5%-ը ապահովված է 3 օպերատորների, 23%-ը՝ 2 օպերատորների և միայն 8,5%-ը՝ 1 օպերատորի հանրային շարժական կապի ծածկույթով:
- Միաժամանակ, հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 2-ի N70Ն որոշման համաձայն հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի օպերատորները իրենց գործառնական գրասենյակներում և ինտերնետային կայքերում հրապարակում են իրենց հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ծածկույթ չունեցող բնակավայրերի ցանկի, իրենց հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ծածկույթով ապահովված բնակավայրերի ցանկի և այդ բնակավայրերում կիրառվող շարժական բջջային կապի տեխնոլոգիաների և մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը:
- Հանձնաժողովի 2014 թվականի մարտի 12-ի «Արտակարգ պատահարների արագ արձագանքման «911» և «112» ծառայության հանմընդհանուր հասանելիության ապահովման մասին» N33Ն որոշման համաձայն՝ հանրային շարժական կապի օպերատորները, իրենց հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ծածկույթի սահմաններում, անվճար ապահովում են իրենց և այլ օպերատորների բաժանորդների հասանելիությունը արտակարգ պատահարների արագ արձագանքման «911» և «112» ծառայությանը:
- Հաշվի առնելով, որ ՀՀ բոլոր բնակավայրերը և միջպետական ավտոճանապարհների 97%-ն ապահովված են հանրային շարժական բջջային կապի ծածկույթով, «911» և «112» ծառայության հանմընդհանուր հասանելիության խնդիրը նշված վայրերում գործնականում կարելի է լուծված համարել:
- Բացի այդ, օպերատիվ արձագանքման ծառայությունների արդյունավետության բարձրացման աշխատանքների շրջանակում՝ հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 2-ի N68Ն որոշման համաձայն, ապահովվել է օպերատիվ արձագանքման

կողերին զանգահարողների հեռախոսահամարների ներկայացման հնարավորությունը:

- Հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 31-ի «Հանրային շարժական կապի հեռախոսասարքերի և պլանշետների ապակողավորման ապահովման կանոնները սահմանելու մասին» որոշմամբ կանոնակարգվել է հանրային շարժական կապի հեռախոսասարքերի և պլանշետների ապակողավորման ծառայությունը: Մասնավորապես, օպերատորները որոշակի ժամկետով բաժանորդագրման պարտավորությամբ առաջարկվող սարքերի հետ միաժամանակ, որպես այլընտրանք պետք է առաջարկեն նաև այդ սարքերի ապակողավորված շուկայական արժեքով տարբերակը: Որոշակի ժամկետով կամ առանց բաժանորդագրման պարտավորությամբ առաջարկված կողավորված սարքերի ապակողավորումն օպերատորն իրականացնելու է բաժանորդի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման դեպքում՝ անվճար, առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում: Այն սարքերը, որոնց ապակողավորումը սարք արտադրողի կողմից 3 աշխատանքային օրվա ընթացքում հնարավոր չէ իրականացնել, ապա օպերատորն ապակողավորումն ապահովում է առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- ՀՀ հեռահաղորդակցության ոլորտում մրցակցության խթանման և սպառողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում, սույն թվականի ապրիլի 1-ից մեկնարկել է շարժական կապի համարների տեղափոխելիության ծառայությունը, որը հնարավորություն է տալիս բաժանորդին առանց խոչընդոտների և անվճար փոխել շարժական կապի իր օպերատորին՝ պահպանելով իր գործող հեռախոսահամարը: Հեռախոսահամարների տեղափոխման գործընթացը իրականացվում է առավելագույնը 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ «մեկ պատուհանի» սկզբունքով, դիմում ներկայացնելով միայն նախընտրելի օպերատորին: Բաժանորդները կարող են օգտվել նշված ծառայությունից համարի տեղափոխելիությանը հաջորդող վերջին տասներկու ամսվա ընթացքում առավելագույնը երկու անգամ:
- Շարժական բջջային կապի շուկայում մրցակցության խթանման, շարժական կապի համարների տեղափոխելիության ծառայության խրախուսման և սպառողների համար այդ ծառայության օգտավետության ապահովման

նպատակով, հանրային շարժական բջջային կապի օպերատորներին տրամադրվել են հանրային շարժական կապի ցանցի նոր կողեր: 41, 43 և 49 կողերը համապատասխանաբար տրամադրվել են «Օրանժ Արմենիա», «ԱրմենՏել» և «Ղ-Տելեկոմ» ընկերություններին:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև մրցակցության զարգացմանը նպաստելու և տեխնոլոգիական չեզոքություն պահպանելու կարգավորման քաղաքականության արդյունքում 2014 թվականին.

- Երևան քաղաքում ամրակցված հեռախոսացանցի թվայնացման մակարդակը հասցվել է 100%-ի, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ 87 %-ի,
- հանրապետությունում գործում են բջջային կապի փոխադարձ ներթափանցման ծածկույթ ունեցող 3G տեխնոլոգիայի վրա հիմնված երեք ցանցեր, որոնք 2015 թվականի ընթացքում կշարունակեն ընդլայնվել: Ընդ որում, ՀՀ բնակավայրերի 97,7%-ն ապահովված է հանրային շարժական բջջային կապի 3G տեխնոլոգիայի ծածկույթով,
- Երևան, Գյումրի, Վանաձոր, Դիլիջան և Ծաղկաձոր քաղաքներում գործում են 4G/LTE տեխնոլոգիայի վրա հիմնված ցանցեր: 2015 թվականի ընթացքում նախատեսվում է դրանց ընդլայնումը նաև այլ բնակավայրերում,
- 2014 թվականի ընթացքում իրականացված լայնամասշտաբ աշխատանքների արդյունքում Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան, Հրազդան, Աբովյան, Աշտարակ, Չարենցավան, Արմավիր, Էջմիածին, Ալավերդի, Արարատ, Արտաշատ, Դիլիջան, Իջևան, Մասիս, Սևան, Քաջարան և Մեծամոր քաղաքներում հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը: 2015 թվականին այդ ցանցերի ներդրմանն ուղղված աշխատանքները կշարունակվեն նաև հանրապետության այլ մարզային բնակավայրերում,
- 2014 թվականի առաջին կիսամյակի դրությամբ միջազգային «ԱյՓի» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 87500Մբիթ/վ, որը 2013 թվականի համեմատությամբ աճել է 1.2 անգամ,
- մրցակցության արդյունքում միջազգային «ԱյՓի» տարանցման ծառայության հոսքերի աճի շնորհիվ նվազել է նաև այդ ծառայության սակագինը:

Մասնավորապես, 2014 թվականի առաջին կիսամյակում այն կազմել է 5337 դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով մոտ 30%-ով,

- ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը (այդ թվում՝ շարժական 3G և GPRS բաժանորդների) 2014 թվականի առաջին կիսամյակի դրությամբ կազմել է 2057841,
- աճել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայության մատուցման ծավալները, որի բաժանորդների քանակը (առանց GPRS բաժանորդների) 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմել է 1 214 135,
- կրճատվել է հեռախոսակապի միջոցով (dial-up) ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը՝ 2014 թվականի առաջին կիսամյակում կազմելով 1397 բաժանորդ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.3 անգամ:

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները, հանձնաժողովը՝ գործելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում, 2015 թվականին շարունակելու է ոլորտում արդար և բաց մրցակցության երաշխավորման և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության աշխարհագրության մեծացման և մատչելիության ապահովման, ինչպես նաև գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

2015 թվականի ընթացքում շարունակվելու է ամրակցված հեռախոսային ցանցերի թվայնացման գործընթացը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

Հանձնաժողովը կշարունակի հետևել «ԱրմենՏել» ՓԲԸ-ին տրամադրված լիցենզիայով ստանձնած պարտավորության՝ ՀՀ մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա գործող հեռախոսագծերի արդիականացման գործընթացին, որի արդյունքում հնարավորություն կընձեռվի տվյալ հեռախոսագծերով ստանալ լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ:

Միաժամանակ, ուշադրության կենտրոնում կլինի «Յուքոմ» ՍՊԸ-ին տրամադրված հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային կողերի և նրանց համարային շարքերի զբաղեցման թույլտվության պայմաններով ամրագրված պարտավորությունների, մասնավորապես, ժամանակացույցով սահմանված բնակավայրերում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի զարգացման և համապատասխան աշխարհագրական տարածքները հանրային ամրակցված

հեռախոսային ծառայությունների մատուցմամբ ապահովման աշխատանքների պատշաճ կատարման ընթացքը:

Հետևողական աշխատանքներն կտարվեն նաև «Յուքոմ» ՍՊԸ-ի 801-811ՄՀց և 842-852ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությամբ սահմանված պարտավորությունների կատարումը վերահսկելու ուղղությամբ: Նշված պարտավորությունների կատարումը կնպաստի ՀՀ մարզերում նորագույն (չորրորդ սերնդի LTE) տեխնոլոգիաների ներդրմամբ հեռահաղորդակցության ենթակառուցվածքների զարգացմանը, մրցակցության խթանմանը, ինչպես նաև լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ապահովմանը:

Հանձնաժողովը 2015 թվականի ընթացքում առանձնակի ուշադրությամբ հետևելու է շարժական կապի հեռախոսահամարների տեղափոխելիության համակարգի և ծառայության աշխատանքին, ինչպես նաև դրա ազդեցությանը շարժական կապի օպերատորների մրցակցությանը:

Հիմք ընդունելով հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 24-ի «Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունները դասակարգելու և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկաները սահմանելու մասին» որոշումը, գերիշխող դիրքի առկայության ուսումնասիրության նպատակով, 2015 թվականին հանձնաժողովը համապատասխան վերլուծություններ կիրականացնի կարգավորման ենթակա առանձին շուկաներում՝ կիրառելով օրենքով ամրագրված պարտավորություններ գերիշխող դիրք ունեցող օպերատորների նկատմամբ:

**Հանձնաժողովի համագործակցությունը
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, այլ երկրների
կարգավորող մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ**

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է այլ երկրների կարգավորող մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ:

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում այն կիրառելու կամ կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը համագործակցում է տարբեր միջազգային կառույցների հետ: Մասնավորապես, համատեղ աշխատանքներ են տարվում Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ կարգավորող հանձնաժողովների ասոցիացիայի (NARUC), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU), Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) և Եվրոպական Միության հովանու ներքո գործող Ինոգեյթ ծրագրի հետ: Հաջորդ տարում ևս նախատեսվում է շարունակել համագործակցությունը նշված կառույցների հետ, մասնակցել Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հերթական հանդիպումներին և նիստերին, համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կրթության զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպվող սեմինարներին:

Հեռահաղորդակցության ոլորտի զարգացման միջազգային փորձն ուսումնասիրելու և տեղայնացնելու նպատակով հանձնաժողովը կշարունակի ակտիվ համագործակցությունը Հեռահաղորդակցության միջազգային միության, Կապի տարածաշրջանային համագործակցության, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, ինչպես նաև Ուկրաինայի և Բելառուսի կապի ոլորտը կարգավորող մարմինների հետ: Կշարունակվի համագործակցությունը նաև Եվրամիության Արևելյան Գործընկերության ծրագրի շրջանակում ստեղծված Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորողների խմբում ընդգրկված 5 անդամ երկրների կարգավորող մարմինների հետ:

Հանձնաժողովը ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ կարգավորող հանձնաժողովների ասոցիացիայի (NARUC) հովանավորությամբ մասնակցում է նաև այլ երկրների, մասնավորապես Մոլդովայի, Ուկրաինայի և

Վրաստանի էներգետիկայի բնագավառը և ջրային համակարգը կարգավորող մարմինների փորձի փոխանակման գործընթացին, որը կշարունակվի նաև 2015 թվականին:

Արդյունավետ համագործակցություն է իրականացվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի հետ: Համատեղ աշխատանքների արդյունքում զգալիորեն բարեփոխվել է ոլորտը կարգավորող օրենսդրությունը, բարելավվել է գործարար միջավայրը, մասնավորապես՝ պարզեցվել են թույլտվությունների ստամադրման ընթացակարգերը, կրճատվել է վարչարարությունը: 2015 թվականին համագործակցությունը շարունակվելու է նաև հեռահաղորդակցության բնագավառի զարգացման ուղղությամբ: Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի միջև կնքված հուշագրի և համատեղ աշխատանքային ծրագրի՝ աշխատանքներ կտարվեն ԼՂՀ տարածքում հեռահաղորդակցության ծառայությունների, այդ թվում՝ շարժական և ամրակցված հեռախոսակապի, «ԱՅՓԻ» տարանցման և ինտերնետ հասանելիության ծառայությունների առավել ընդլայնման ու սակագների մատչելիության ապահովման ուղղությամբ, միտված ԼՂՀ կարգավորող մարմինն վերաբերող օրենքների և իրավական ակտերի բարելավմանը, հանձնաժողովի աշխատակիցների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործմանը, ինչպես նաև կարգավորող մարմինն վերապահված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերի մշակմանն ու ներդրմանը: